Նոտարական ակտի կոդ: 641-20190819-117-4103272
Նոտարական ակտի գաղտնագիր: 85VXPM

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

17.08.2018թ. /տասնյոթը օգոստոսի երկու հազար տասնութ թվականին/ վավերացված Անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ

Հայաստանի Հանրապետություն քաղաք Երևան
Երկու հազար տասնինը թվականի օգոստոսի տասնիններին

ՀՀ քաղաքացիներ **ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ**, ծնված՝ 18/07/1978թ-ին, ՀԾՀ՝ 2807780660, նույնականացման քարտ՝ 007607567, տրված՝ 048-ի կողմից, 02/03/2016թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԱՃԵՄՅԱՆ 2 ՓԿՂ., 137 Տ, և
ՎԱՉԻԿ ՄԱՐԳԱՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ, ծնված՝ 25/08/1979թ-ին, ՀԾՀ՝ 3508790657, նույնականացման քարտ՝ 007835507, տրված՝ 048-ի կողմից, 14/04/2016թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԱՃԵՄՅԱՆ 2 ՓԿՂ., 137 Տ, **այսուհետ՝ Կողմ-1,** մի կողմից, և
Հայաստանի Հանրապետությունն ի դեմս Հայաստանի Հանրապետության Ոստիկանության պետի Վալերի Օսիպյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, **ում անունից հանդես է գալիս լիազորված անձ՝ ՀՀ քաղաքացի ԻՍՐԱՅԵԼ ՄՀԵՐԻ ՍԱՖԱՐՅԱՆԸ,** ծնված՝ 27/07/1987թ-ին, ՀԾՀ՝ 3707870642, նույնականացման քարտ՝ 005833934, տրված՝ 011-ի կողմից, 28/04/2017թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՐԲ., 8Ա Տ հասցեում, երկու հազար տասնինը թվականի հունիսի հինգին ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Վարդան Վլադիմիրի Մովսիսյանի կողմից տրված թիվ 11/568 լիազորագրի հիման վրա, **այսուհետ՝ Կողմ-2,** մյուս կողմից, միասին անվանվելով Կողմեր, կնքեցին սույն Համաձայնագիրը, այսուհետ՝ Համաձայնագիր, հետևյալի մասին

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը փոփոխություններ են կատարում Կողմերի միջև **17.08.2018թ. /տասնյոթը օգոստոսի երկու հազար տասնութ թվականին/** ստորագրված, Երևան նոտարական տարածքի նոտար Լիլիթ Ասատուրի Մուրադյանի կողմից վավերացված և **սեղանամատյանի թիվ 1776 համարի** տակ գրանցված Անշարժ գույքի վարձակալության պայմանագրում:
1.2 Կողմ-1-ը հավաստում է, որ սույն Համաձայնագրի 1.1 կետում նշված պայմանագրի 1.1 կետում նշված՝ **ՀՀ, մարզ Արմավիր, համայնք Նորապատ, 5 /հինգ/ փողոց, թիվ 3 /երեք/ նրբանցք, թիվ 3 /երեք/ հասցեում գտնվող անշարժ գույքը** գրավ դրված չէ, արգելանքի և կալանքի տակ չի գտնվում, **տարածքի մի մասը հանձնված է հասարակական վարձակալության, այլ գրանցված սահմանափակումներ չկան,** ինչը հաստատվում է նաև Անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ N ՄՏ-14082019-04-0277 միասնական տեղեկանքով, որի տվյալները լրացված են 14 օգոստոսի 2019թ. դրությամբ՝ ՀՀ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
430.38քմ շենք շինություններից՝ 30.24քմ ենթակայան, 213.4քմ վարչական շենք, 66.7քմ ծածկ, 24.54քմ պարիսպ, 7.3քմ ծածկ, 88.2քմ ծածկ:
Լրացուցիչ նշումներ և լրացումներ՝
Իրավունքի պետական գրանցում ստացած հողամասի գծային չափերը և մակերեսը չեն համապատասխանում քարտեզի տվյալներին: Ըստ քարտեզի տվյալների հողամասի մակերեսը կազմում է 0.5297հա, մինչդեռ գրանցված է 0.553հա, ուստի հետագա գործարքներից ծագող իրավունքի գրանցման դեպքում անհրաժեշտ է ներկայացնել համայնքի ղեկավարի կողմից հաստատված 0.0553հա հողամասի կոորդինատներով իրադրության հատակագիծ և քարտեզներում ուղղում կատարելու վերաբերյալ գրություն: Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է ՀՀ 04.10.2005թ. թիվ 199-Ն օրենքի 23 հոդվածի համաձայն՝ պայմանով, որ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը ներկայացնելու դեպքում: Գույքի կազմում առկա է ինքնակամ կառուցված շինություն՝ 129.8քմ մակերեսով: Մուտքը և ընդհանուր տարածքները տրված են ընդհանուր օգտագործման իրավունքով: Առկա է օտարման դեպքում հողամասի կադաստրային արժեքի վճարման պայման:

1.3 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրի 1.1 կետում նշված պայմանագրի 3.2 կետը փոփոխվում է հետևյալ կերպ.

«3.2 Սույն պայմանագիրը գործում է մինչև 23/08/2020թ. /քսաներեքը օգոստոսի երկու հազար քսան թվականը/»:

1.4 Սույն Համաձայնագրի 1.1 կետում նշված պայմանագրի մյուս բոլոր կետերը մնում են անփոփոխ:
1.5 Սույն համաձայնագիրը համարվում է Կողմերի միջև **17.08.2018թ.** /տասնյոթը օգոստոսի երկու հազար տասնութ թվականին/ վավերացված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի անբաժանելի մասը:
1.6 Սույն Համաձայնագիրը ենթակա է նոտարական վավերացման և պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի կոմիտեի միասնական ստորաբաժանումում նոտարական վավերացման օրվանից **երեսուն աշխատանքային օրվա ընդացքում:**
1.7 Համաձայնագրի նոտարական վավերացման ծախսերը կատարվում է Կողմ-2-ի կողմից:
1.8 Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով **4 /չորս/** օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է ԵՐԵՎԱՆ նոտարական տարածքի նոտարական գործում, իսկ մյուս օրինակնակները տրվում են Կողմերին:
1.9 Նոտարի ներկայությամբ Համաձայնագիրը ստորագրող կողմերը հայտարարում են, որ իրենք գործունակ են, ամբողջովին գիտակցում են և հասկանում Համաձայնագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ Համաձայնագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով:
1.10 Համաձայագիրը կողմերի համար բարձրաձայն ընթերցվեց նոտարի կողմից և պարզաբանվեցին օրենսդրությամբ գործող նորմերը:
1.11 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը կարող է կատարվել ՀՀ օրենքով սահմանված կարգով հաշտարարության և/կամ դատարանի միջոցով:
1.12 Համաձայնագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

2. Կողմերի ստորագրությունները

Կողմ-1
ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ, Հ/Հ՝ 2470027449410000

_____

ՎԱՉԻԿ ՄԱՐԳԱՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ, Հ/Հ՝ 2470027449410000

_____

Կողմ-2

Հայաստանի Հանրապետությունը ի դեմս ՀՀ ոստիկանության
պետի լիազորված անձ՝ ԻՍՐԱՅԵԼ ՄՀԵՐԻ ՍԱՖԱՐՅԱՆ
ՀՀ Ֆինանսների Նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013150041
ՀՎՀՀ 01840082

_____

Երկու հազար տասնինը թվականի օգոստոսի տասնիններին սույն համաձայնագիրը վավերացվել է իմ՝ **Երևան** նոտարական տարածքի նոտար **ԼԻԼԻԹ ԱՍԱՏՈՒՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՍ** կողմից:
Համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են: Սույն համաձայնագիրը ենթակա է գրանցման անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ստորաբաժանումում՝ երեսուն աշխատանքային օրվա ընթացքում:

Գրանցված է սեղանամատյանում թիվ 2462----------ով:

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Լիլիթ Ասատուրի Մուրադյան